

զերը, երբ ժԳ դարուն սկիզբը արարերէնէ հայերէնի կը թարգմանէր Պատ. Պղնձէ Քաղաքին հետաքրքրական վէպը, ուր կ'ըսուի թէ «եւ զեղեցիկ թագուհի մի ի վերայ աթոռին նստած, եւ խալիչայ մի (գորգ մը) փուռ մարգարտով լցած ի ներքեւ թագուհւոյն»։ Որ կարծես պատկերացուած կը գտնենք Կարսի Գազիկ թաղաւորին աւետարանին (Երուսաղէմ) ծանօթ մանրանկարին մէջ։ Լամբրոնացին իսկ իր Մեկնութիւն Պատարագին մէջ կը յիշէ այդ գոհարալարդ գորգերը՝ «աղանակալ բաղմականաց» մասին խօսելով⁽⁹⁾։ Որոնց կողոպուտովն է որ Աշոտ Ողորմած կը կերակրէ, ըստ պատմիչին, իր ժամանակուան տնանկներն ու աղքատները։ Ով զիտէ, գուցէ Հայաստանէն իսկ կողոպուտած ըլլային Թիմուր Լէնկի կանանոցին զետինը ծածկող գորգերը ոսկեակուռ, ինչպէս որ կը վկայէ Շէրիֆ-է-Գ-Տին Ալի Եգոցի պարսիկ պատմիչը, երբ կը նկարագրէ 1390ին Ալիբարի մէջ Թիմուրի Խուրուլթան, «ոսկիէ գորգեր»ը Երկիրս յիշելով⁽¹⁰⁾։ Եւ զեւ մինչեւ մեր օրերը կը վկայուի որ հայերը Բարերդի մէջ «մանաւանդ ոսկեթել մետաքսեայ գորգեր գործելու» մէջ ճարտար էին⁽¹¹⁾, ինչպէս Կեսարիա, Տիգրանակերտ եւ Սերաստիա, ուրկէ տարուած հայ գործաւորներ կը հիւսէին Կ. Պոլսոյ մօտ Հերեքէի Սուլթանական գորգագործարանին նուրբ ոսկեթել եւ արծաթթել գորգերը 1890ական թիւերուն։

Այս գորգերը օտար արքունիքներու գանձն ու զարդը եղած են, ինչպէս որ վկայութիւններ ցոյց կու տան։ Խոսքովի Գարուն գորգէն շատ աւելի առաջ նման գորգեր հիւսուած են։ Եթովպերէն Ֆէդհա Նակասը (Թագաւորաց Փառք) հնադարեան սրբազան մատենան մէջ կը յիշուի որ Սողոմոն Շէպոպայի Մակտա թագուհիին համար «գահ մը կանգնեց ծածկուած մետաքսեայ գորգերով, զարդարուած ոսկի, արծաթ, մարգարիտ եւ աղամանդ ծողերով»։ Կրնայ ըլլալ որ այս աւանդութիւնը Սողոմոնէն (1033-975 նախ քան Քրիստոս) շատ վերջը կազմուած ըլլայ։

Սաւաֆեան շրջանին Պարսկաստան կը գործածուէին արքունեաց եւ մեծատանց քով այս ոսկեթել գորգերէն, ըստ բաղմաթիւ օտար վկայութեանց, որոնցմէ միայն քանի մը հատ հոս կը ներկայացնեմ։ Անգլիացի ծան Քարզվրայդ կը վկայէ որ ի Գաղպին Շահ Ապպաս Մեծի պալատին մէջ «սենեակներուն զետինները, եւ վերի սրահները սփռուած էին ամենանուրբ գորգերով, հիւսուած եւ խաւուած մետաքսով ու ոսկեթելով, բոլորն ալ նշաններ ու կոթողներ պարսկական մեծութեան»⁽¹²⁾։ Իսկ այլուր Սպահանի պալատներուն նկարագրութեան ատեն կը վկայէ որ սրահներուն յատակը «սփռուած են մետաքսով եւ

(9) Ս. Ղազար, 1847, էջ 459։

(10) London, 1723, Vol. I, p. 344, Vol. II, p. 359.

(11) Աւիստահ. Հայաստանի Գրեց' Աւետիք Տէր Յակոբեան։ Թիֆլիս, 1914, էջ 183։

(12) Purchase His Pilgrimes, 1905, Vol. III, p. 506.